

## *Հայ ազգային ծեսեր, տոներ*

### **ԲԱՐԵԿԵՆՂԱՆ**

- Ահա եկավ հայոց ազգին օրերը,  
Հանեցեք հիները, հագեք նորերը:
  
- Բարեկենդան, փորեկենդան,  
Բարեկենդան օրեր է,  
Խելքս գլխես կորեր է...
  
- Մե օր բարեկենդան, տաս օր անոթի:

Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Այն ուրախության ու զվարճանքի օր է, հիշեցնում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի ու անհոգության մեջ:

Նախկինում դրանք հեթանոսական տոնախմբությունների օրեր էին, կատարվում էին փետրվարին կամ մարտի սկզբին: Տոնը հավանաբար կապ ուներ գարնան սկսվելու հետ: Եվ պատահական չէին զվարճությունները, որոնք արթնացող բնությանը ուրախ դիմավորելու, մարդկանց վերակենդանացնելու խորհուրդ ունեին: Մարդիկ մաղթում էին միմյանց բարի կենդանություն: Հետագայում քրիստոնեությունը հարմարեցրեց իրեն և դարձրեց Մեծ Պահքի նախորդող շաբաթվա տոն, որը նշվում էր կերուխումով, մասսայական խաղերով, մրցումներով, թատերախաղերով, պարերով և այլն: Այն տևում էր երկու շաբաթ, անմիջականորեն հաջորդելով Ս. Սարգսին և ավարտվելով Մեծ պասով: Մեծ պահքին նախորդող կիրակին Բուն Բարեկենդանի օրն էր: Պահքի կարևոր լինելը մարդկանց ցույց է տվել Քրիստոսը: Նա անապատում 40 օր է անցկացրել: Մարդիկ Հիսուս Քրիստոսի օրինակով են պահում Մեծ պահքը: Մեծ պահքի 40 օրերին գումարվել է նաև Զատիկին նախորդող 9 օրերը, և այն տևում է 49 օր: Մեծ պահքն ավարտվում է Զատիկի՝ Քրիստոսի Հարության տոնով:

Բարեկենդանն այնքան սիրված, ժողովրդական, սպասված տոն էր, որ հայ ազգի կողմից այն ընկալվում էր որպես ամենաազգային («հայոց ազգի օրեր»), ինչպես նաև ամենաերջանկաբեր, խրախճանք, ճոխ ու առատ ուտելիքներ վայելելու տոն, պարերի, խաղերի, զվարճահանդեսների, թատերախաղերի, այցելությունների և ուրախության երկու շաբաթ: Այդ օրերին թույլատրվում էր առատ ուտելիք, կերուխում:

Նախապատվությունը տրվում էր մսեղենի, կաթնեղենի, յուղի առատությանը: Տավարի, ոչխարի և թռչնեղենի մսից պատրաստում էին զանազան ճաշատեսակներ: Առաջին օրերին պատրաստում էին մեծ քանակությամբ գաթա ու հալվա: Երեկոյան ուտում էին

կաթնապուր, մածուն, խաշած ձու: Պատրաստում էին փաթիլա, սրռոն, բխբխիկ: Որոշ տեղերում նախապատվությունը տրվում էր փոքր ձավարով ու զանազան համեմունքներով լցոնած և թոնիրում ամբողջովին խորոված ոչխարին կամ տվյալ վայրում առավել սիրված կերակրատեսակներին: Պարտադիր ճաշատեսակը խաշիլն էր, որով սկսվում էր տոնը և երկու շաբաթ պատրաստվում բոլոր տներում: Տանտիկիներն իրենց պահած մթերքներով շոայլորեն հյուրասիրում էին ընտանիքի անդամներին և հյուրերին: վերջին օրը, երեկոյան, կաթնապուր ու մածուն էին ուտում, վրայից՝ խաշած ձու, ասելով. «բերաններս փակում ենք սպիտակ ձվով: Աստված արժանացնի կարմիր ձվով բաց անելու», - ակնարկելով, որ ահա սկսվում է Մեծ պասը, որի 49 օրերի ընթացքում այլևս ձու չպիտի ուտեն մինչև Չատիկ: Որոշ տեղերում ձուն խաշելու փոխարեն ձվածեղ էին պատրաստում:

Տոնին պատրաստվում և մասնակցում էին բոլորը՝ մեծ, թե փոքր: Չնայած ամենուր դեռ ձյուն էր, ցուրտ, սակայն դա չէր խանգարում, որ մարդիկ անձնատուր լինեն զվարճություններին: Երկու-երեք օր առաջ կանայք և տղամարդիկ դադարում էին աշխատել, զանազան խաղեր էին խաղում, զվարճանում երեխաների պես: Ծերունիները, առանց քաշվելու միանում էին այս կամ այն խմբին՝ «թոփ» խաղալու: Երիտասարդները «սուրմագիլի» կամ «կունդի» էին խաղում:

Շատ տարածված էր ճլորթին կամ ճոճախաղը: Թաղի երիտասարդությունը սովորաբար խաղատեղ էր ընտրում բարձր ու դիմացկուն գերաններ ունեցող գոմ: Որանի սայլի ճոպանը կախում էին հեծանից և նրա երկու օղակների վրա դնում 2 մետրանոց տախտակ: Գետնից մի մետր բարձր այդ տախտակի ծայրին հաճախ աղջիկ ու տղա էր կանգնում: Ճոճախաղերը հաճախ վեր էին ածվում մրցախաղերի՝ ով ավելի մեծ կորագծով կճոճվի: Լոռիում, փոքրերի մի փոքր ճոճվելուց հետո, տան նանեին բերում, նստեցնում էին ճլորթուն, որ «եղ աներ»: Նանի նստելուց հետո հարսները նրա գոգը մի քար էին դնում և, փոխանակ ճոճելու, պտտեցնում էին, թոկը ոլորում, որ հետո բաց թողնելիս հակառակ կողմի վրա էր պտույտ գալիս: Այդ միջոցին պառավը քարը գոգից վայր էր գցում՝ ասելով. «Էսքան եղ ինձ»: Հարսներից մեկը քարն իսկույն վերցնում և կրկին դնում էր նանեի գիրկը, որ պառավը, վերստին պտույտ գործելուց հետո, քարը նորից գցելով՝ ասեր. «Էսքան եղ էս հարսիս», և այսպես շարունակ, բոլոր հարսների համար, որպեսզի շատ յուղ ունենային:

Տարոնում բարեկենդանյան խաղերից վերջինը «կշռեցուկ»-ն էր: Առաստաղի գերաններից կապված մի երկթաթանի ճոճանակի մեջ նստելով՝ կշռվում էին ընկերներն ու ընկերուհիները՝ մյուս տարվա Բարեկենդանին իմանալու համար, թե «արդյոք իրենց կյանքից անցնող տարին, որ պատված էր ամբողջ հոգսերով, ո՞րքան հալել ու մաշել, ծյուրել ու ցամաքացրել է իրենց անձը»:

Բարեկենդանի օրը մինչև իսկ չքավորներն ու աղքատներն էին վայելում տոնական սեղանը: Այդ օրը հիշում էին նաև պանդխտության մեջ գտնվողներին ու երգում էին

հատուկ տաղեր: Այդ օրվա խնջույքը շատ տեղերում ջնջում էր բոլոր տարբերությունները. «Իրար հետ սեղան էին նստած ծերունի սկեսրարը ու մանկամարդ հարսը, տղամարդ, կնիկմարդ, բոլորը միասին վայելում են գաթա, հալվա, լոխում, հավկիթ, հասութա, սեր, կարագ, մատակի մածուն, նոր ծնած կովի դալ, հավ, սագ, գառ, ոչխարի կամ կովի դավուրմա, քյուֆթա, տոլմա, փլավ, յախնի...», - այսպես էր ավարտվում Բարեկենդանը Ջավախքի պահպանողական հայերի մոտ:

Հարսանիքներն ու նշանդրեքները Բարեկենդանի անբաժան ուղեկիցներն էին: Դրանք, իրենց հերթին, նոր թափ էին հաղորդում տոնի ուրախությանը: Ուրախ պարերը Բարեկենդանի խնջույքների անբաժան ուղեկիցներն էին: Պարերը սկսվում էին առաջին օրը և օրեցօր աշխուժանում, բազմամարդ դառնում ինչպես կատարողներով, այնպես էլ հանդիսատեսներով, խրախուսողներով: Հատկապես վերջին շաբաթ – կիրակի օրերը դրանք դառնում էին համընդհանուր, համագյուղական, համաթաղական: Պարում էին ինչպես զուռնա - դիոլի նվագի տակ, այնպես էլ պարերգերի, որ բազմաթիվ էին:

Բարեկենդանի գլխավոր զվարճությունը, սակայն, դիմակավոր խաղերն ու թատերական ժողովրդական ներկայացումներն էին (առհասարակ, դեռ հնագույն ժամանակներում, տոնախմբությունների, թատերական ներկայացումների կամ որսորդության ընթացքում հայերը դիմակ հագնելու սովորություն ունեին):

Ներկայացումների ժամանակ ծիծաղախառն կատակներով քննադատության էին ենթարկվում մեծավորներն ու իշխանավորները: Հավաքվում էին մեծ ու փոքր, մի կողմ էին դրվում պետական կամ եկեղեցական օրենքները, ամեն մարդ առանց քաշվելու ասում էր իր խոսքը: Նույնիսկ եկեղեցին է այդ օրը խստակենցաղ հոգևորականների համար սահմանել որոշ ազատություն: Փաստորեն, Բուն Բարեկենդանը, բացի խրախճանքից, կեր ու խումից, նաև ազատության օր էր: Երեկոյան, երբ խնջույքներից հոգնած մեծերը հավաքվում էին տանը, դուռը թափով բացվում էր և աղմուկով, երգով, թմբուկով ներս էր ընկնում դիմակավորված երեխաների խումբը: Տղաները հագած էին լինում աղջիկների հագուստ, փոքրերը՝ մեծի, երբեմն՝ ծաղրածուի: Արտաքինը պիտի հնարավորին չափ ծիծաղաշարժ լիներ, դեմքերին դնում էին ծիծաղելի դիմակներ կամ մուր, այլուր քսում, ածուխով ներկում: Երեխաները տեսարան էին ներկայացնում գյուղի կյանքից կամ խաղում էին որևէ սրամիտ սյուժե («Բեկ ու գզիր», «Պարոն գզիր», «Գող և փաշա» և այլն):

Մեծահասակների սյուժեներն, անշուշտ, ավելի բարդ էին: Նախ, Բարեկենդանի օրերին եկեղեցին նշում էր Ավարայրի ճակատամարտի հերոս Վարդան զորավարի տոնը: Այդ օրերին հայոց տարբեր ազգագավառներում հաճախ էին ներկայացնում Ավարայրի ճակատամարտի որևէ դրվագ:

Շատ էին կատարվում կենցաղային թեմաներով թատերախաղեր: Օրինակ, «խնամախոս» գնալու ներկայացումը. դերակատարները կանացի զգեստով տղամարդիկ են՝ անճանաչելի կերպով դիմակավորված: Խմբում մեկը առանձնանում է հումորով,

ճարտարախոսությամբ: Խումբը գալիս է մի տուն, որտեղ հարսնացու աղջիկ չկա, սակայն կան երիտասարդ տղաներ կամ երիտասարդ կանայք: «Խնամախոսները» սկսում են բանակցությունները, խաղի մեջ ներքաշվում են տան անդամները: Խնամախոսները խնդրում են իրենց ներկայացնել «հարսնացուին»: Հարսնացուի փոխարեն դերակատարներին ներկայացնում են տան տղային կամ նույնիսկ տանտիրուհուն: Ջավեշտացույցի ժամանակ նյութը ծավալվում է, դուրս գալիս խնամախոսության շրջանակներից, միմյանց հումորով լուրեր են հաղորդում, չարախոսում ուրիշներից: Խաղի պայմանն այն է, որ ներկայացման ընթացքում հնարավորին չափ շատ զվարճախոսեն իրական կյանքից, սակայն դերակատարները պիտի չճանաչվեն տանտերերից: Ջանգեզուրում այդ խաղի տարբերակներից մեկն էր «Հարս»-ը: Բոլոր դերերը այս դեպքում կատարում էին տղաները: Նրանցից մեկը հագնում էր կնոջ ու տղամարդու խառը հագուստ և կատարում փեսայի դերը: Մյուսը հարսի հագուստով էր: Հարս ու փեսին ուղեկցում են նվագածուները: Նվագում են հիմնականում շվի: Ծափերի, աղմուկ - աղաղակի տակ հարսն ու փեսան պարելով շրջում են փողոցներով, ապա մոտենում են որևէ մեկի տանը: Աղմուկից տնեցիները դուրս են գալիս: Որոշ ժամանակ պարելուց հետո ուղեկցողներից մեկը փայտի թրով խփում «սպանում» է հարսին կամ փեսային: «Մպանվածը հարություն է առնում» միայն այն ժամանակ, երբ տանտերերը նրանց համապատասխան մթերքներ են տալիս՝ ձու, այլուր, պանիր, կաթնասեր, միս և այլն: Խումբը շարունակում է իր այցերը՝ հաճախ ստվարանալով յուրաքանչյուր հանդիպումից:

Բարեկենդանին խաղացվող թատերա-զվարճախաղերից մեկը, սակայն, խիստ ընդհանրացած էր Հայաստանի բոլոր գավառներում: Դա «Փաշա», «Քյոխվա», «Շահ-շահ», «Խան», «Ղաղի»(դատավոր) և այլ անուններով հայտնի ներկայացումն էր, որի գլխավոր տարբերակիչ առանձնահատկությունը օտար բռնակալի ու կոնկրետ հայկական համայնքի հանդիպման ծաղրապատկերն էր:

Մարաշի հայերի սիրված ներկայացումներից էր «Թլխաղի»-ը: Կանայք բահը կամ թին հագնում էին կնոջ, բայց հատկապես նորահարսի հագուստ, գլուխը հարդարում զանազան քողերով ու ծածկոցներով. այս մարդ-տիկնիկը կոչվում էր «թլխաղի»:  
«Թլխաղիին» այնուհետև հագնում էին իրենց զարդերը և կատակերգերով պտտվում գյուղի թաղերում՝ տնետուն: Այդ օրը ամեն թաղում կարող էր լինել մի քանի «թլխաղի»:  
Զբոսապտույտից հետո «թլխաղի» տնկում էին մի բակում և մինչև երեկո շուրջը պարում: Ենթադրվում է, որ ծեսը «թլխաղի» կոչվում է «թլոհ», «թլահիլ» բայից, որ «ծաղրել» բայի արմատն է:

Երեկոները, ուրախության թունդ պահին, հանկարծ լսվում են կենդանական անձոռնի ձայներ: Դուռը բացվում է, ներս է ընկնում այլանդակ մեկը՝ երեսը այլուրի կամ մրի մեջ կորած, այծի մորթուց մեծ մորուք շինած, խայտառակ ձևով մորթիներից շորեր հագած, ձեռքին երկար ձող կամ ակիշ բռնած, զանազան թռիչքներ անելով հարձակում է

գործում ուրախացողների վրա: Բոլորը թե ծիծաղում են, թե՛ վախենում այդ այլանդակ մեյմունից: Երեխաները, սաստիկ երկյուղից սրտաճաք լինելով, լալիս են, ամուր կպչում մայրերի կրծքին և գլուխները թաք կացնում նրանց թևերի տակ: Բոլորը տեղերից վեր են թռչում, իրար են խառնվում: Եվ վերջապես մեյմունը, տանտիրոջից իր նվերն առնելով, իր բազմաթիվ ընկերներով գնում է ուրիշ տեղ: Մեյմունները (մեկ այլ տեղ նրանց անվանում են «Նոզայ») ներկայացնում են կամ պառավ սատանա, կամ անճոռնի հրեշ, կամ տգեղ ուղտ, կամ սարսափեցնող շվոտ, կամ դև, կամ մի ուրիշ բան:

Կատակով խաղում էին գոմշակո՞ղիվ, աքլորակո՞ղիվ՝ նմանակելով իսկական գոմշակո՞ղիվներին ու աքլորակո՞ղիվներին: Բայց շատ ավելի տարածված էր «ուղտ խաղացնելը»: Երկու ուժեղ մարդ, մեկը՝ առաջը, մյուսը՝ ետևը, ուսերի վրա էին առնում երկու հաստիկ ձողեր և ամբողջովին փալատով ծածկվում: Քուրջերից շինված, կարկատված ուղտի գլուխ էին ձևացնում և ամրացնում մի բարակ ձողի վրա, որ առջևի մարդը հեշտությամբ կարող էր կրել իր ձեռքին: Սրանց վրա հեծած ուղտապանը, որի երեսը խատուտիկ ներկվում էր, հագնում էր ցնցոտիներ, գլխին դնում քուրջե փաթթոց և ձեռքը երկար, բարակ ու ցեխապատ մի ձող էր առնում: Առջևից ուղտի սանձը քաշող մի պատանի էր լինում՝ նույնօես սև ներկված երեսով ու ցնցոտիներով փաթաթված: Սրանց առջևից գնում էին նվագածուները: Փողոցներից անցնելիս ուղտը և հետևող թափորը կանգ էր առնում մսագործի ու նպարավաճառների խանութների առջև: Ուղտապանը երկարում էր իր ցախոտ ձողը դեպի միսը, դեպի ցուցադրված ապրանքները և պահանջում՝ առնելով իր ուզածները: Ճանապարհին ուղտին և ուղտամարդկանց գինի էլ էին հրամցնում: Ուշագրավ էր ուղտապարը, որը կատարվում էր հաճախակի քացիներ տալով:

Ախալքալակի Փ, Խանչալի գյուղում երկու կամ երեք երիտասարդ տղաներ, ուղտ ձևացնելու նպատակով, իրար կոնքից բռնում, կռանում էին: Մապատը ձևացնելու համար նրանց մեջքին մի փոքրիկ կողով էին դնում ու հին վերմակով ծածկում: Ապա այդ բոլորի վրա, բուրդը դեպի դուրսն արած, գցում էին ուղտագույն մուշտակներ: Կռացողներից առաջինը վերցնում էր երկարաթաթ մի կացին և մտցնում մուշտակի թևերից մեկի մեջ: Կացնի պոչով ձևացվում էր ուղտի պարանոցը, իսկ թաթով՝ գլուխը: Մուշտակի թևաբերանը մի փոքր կախ էին թողնում, որը ներկայացնում էր ուղտի կախ ընկած շուրթը: Այնուհետև զանգը կախում էին ուղտի պարանոցից, որպեսզի այն հեռվից հեռու ահագանգեր նրա գալուստը:

Ուղտը տեր էր ունենում, որը պարանով սանձում էր և առաջնորդում տնից տուն: Այս ձևով նա մուտք էր գործում գյուղի հատկապես այն տները, որտեղ գիշերային խնջույք և տնային խաղեր կազմակերպած ունևոր ընտանիքները, համախմբված մի տեղ, «բարեկենդան – փորեկենդան» էին անում:

Տիրոջ կողմից առաջնորդվելով գոմի օդաները, ուղտը (առջևի դերակատարը) ուղտանման կառանչում էր և, գլուխն ու պարանոցը զանգով ճոճելով աջ ու ձախ,

ահագդեցիկ ձևեր էր անում: Նրա մուտքը իսկույն շեղում էր տվյալ ընտանիքի ժամանցի եղանակը: Երեխաները սարսափահար ընկնում էին մեծերի գիրկը: Կանայք ճչում էին, երբ ուղտը փորձում էր իրենց կծել կամ երեխա «կուլ տալ»: Պատանիները երգեցիկ ձայնով ասում էին.

Մուկը անկաջ ունի,  
ուղտը չունի՛,  
Մուկը անկաջ ունի,  
ուղտը չունի՛ ...

Եվ, որովհետև ուղտը «հասկանում» էր նրանց այդ արհամարհական խոսքերը, կառանչում, հարձակվում էր նրանց վրա ու ահաբեկում էր: Ուրախ ծիծաղը և ահաբեկման աղաղակները խառնվում էին իրար:

Ուղտը տիրոջ հետևյալ երգով ուղտապար էր խաղում՝ ճոճվում էր, զանգ էր գնգացնում, առաջ էր գալիս ու ետ գնում:

Դավալի՛ ջան, դավալի՛,  
Էրկուս քնա, մեկ՝ արի՛.  
Դավալի՛ ջան, դավալի՛,  
Էրկուս քնա, մեկ՝ արի՛:

Ուղտախաղը տևում էր 10 – 15 րոպե, որի համար ուղտատերը, նախապես պայմանավորված լինելով, տանտիրոջից որևէ նվեր էր ստանում: Երբ ուղտախաղը գյուղում ավարտվում էր, դերակատարները հավաքած միջոցներով խնջույք էին կազմակերպում:

Տարոնում Բարեկենդանին փայտե ձի էին պատրաստում և, համապատասխան զարդարանք տալուց հետո, խմբով շրջեցնում էին գյուղի մեջ:

Բարեկենդանյան ներկայացումների ժամանակ «փակ» թեմաներ, անձեռնմխելի անձեր չկային: Հոգևորականները նույնքան, որքան աշխարհականները, ենթարկվում էին բարեկենդանյան ընդհանուր տրամադրությանը: Վանքերում այդ օրերը կոչվում էին Աբողաթողի օրեր: Ստ. Մալխասյանցի ստուգաբանությամբ՝ բառը կազմված է «աբեղա» և «թողուլ»(թողնել, արձակել) բառերից և նշանակում է արեղաների թողություն, արձակում վանական խիստ կյանքի կանոններից: Ազգային հինավուրց տոնը այդպես է կոչվել քրիստոնեության հաստատումից հետո, որով հայ եկեղեցին խստակենցաղ հոգևորականների համար սահմանել է որոշ ազատություններ: Այստեղ ևս մուտք են գործել բարեկենդանյան խաղերն ու խրախճանքները:

Բարեկենդանի վերջին օրը խելահեղության են հասնում խնջույքները, պարերը, խաղերը: Բոլորը ջանում են ուտել, վերջացնել բոլոր մսեղեն – յուղեղեն – կաթնեղեն կերակրատեսակները: Աղջիկները ճլորթու վերջին ճոճերն են անում, տղաներն էլ հրապարակ են դուրս գալիս գլխավոր ձիարշավի, որը պիտի ավարտվի «Ուտիս տատին» վոնդելու, «Պաս պապին» հրավիրելու ծեսով: «Ուտիս տատը», որը Բարեկենդանի օրերին

կերած – խմած տեսքով բոլորին ուտել – խմելու էր հրավիրում, այժմ արդեն զգգված, քրքրված տիկնիկ է: Բարեկենդանի վերջին օրը, երեկոյան, հանդիսավոր գլորվում է սարի գլխից՝ այստեղ երիտասարդների բարեկենդանյան վերջին խնջույքը հովանավորելուց հետո: Նրան գալիս է փոխարինելու Պաս պապին կամ Ակլատիզը (Ախելուծ, Ախալոճ, Ախլըռ, Ախացել, Աքլատիզ, Գոգոռոզ, Խուխուլիճ, Խուլուճիկ, Մոռմոռոզ, Մոմոաս, Մեծպապ, Պապի պուլուլ, Որոջբեկ, Ֆոիկ): Սա իրենից ներկայացնում է մի սոխ կամ կլոր խնձորաչափ կարտոֆիլ՝ վրան յոթ փետուր խրած և թելով առաստաղից կախ տված: Այն առաստաղից կախելիս երգում էին.

- Տատը գնաց շերեփը ձեռին,  
Պապը եկավ չոմբախն ուսին:

Կարնոհայերի մոտ այդ տիկնիկը ծերունու տեսքով էր: Այն պատրաստվում էր տղամարդու հագուստով, փարթամ ու սպիտակ բեղ ու մորուքով, միտտանի, որի ծայրին խրվում էր սոխը՝ յոթ փետուրներով, պարզած թևերով, որոնցից քարեր էին կախվում: Ուրիշները ոլորած ճիպոտի ծայրին գլուխ սոխ էին ամրացնում, սոխի վրա այծի մազից բեղ ու մորուք սարքում, սոխի մեջ յոթ գույնզգույն փետուր խրում: Այն կախելու ժամանակ երեխաները երգում էին.

- Ակլատիզ, չվանը վիզ  
Եկավ մեզ հյուր՝ կախվավ երդիս:

Յոթ փետուրները, որ Մեծ պասի յոթ շաբաթներին էր համապատասխանում, յուրատեսակ օրացույցի դեր էին կատարում, յուրաքանչյուր շաբաթվա վերջում մեկ փետուրը հանվում էր: Շատերն ամեն շաբաթվա փետուրը հանելիս ուղեկցում էին բնորոշ երգերով: Շիրակում յուրաքանչյուր փետուրը հանելիս ասում էին «Ճիճու, ճիճվարանքը՝ դուրս, ցորեն, գարին՝ ներս» և ջարդում ու մի կողմ էին նետում փետուրը: Ամենուր Ակլատիզ - Պաս պապին հատկացվում էր պասը հսկող դեր: Այն շարունակ ճոճվում էր կրակի, ծխի և օդափոխության շնորհիվ: Թելը պտտվում էր մեկ՝մի, մեկ՝ մյուս ուղղությամբ, ինչու և Մասունում այն կոչվում էր «ֆոռիկ»: Նրանով վախեցնում էին երեխաներին, որ հանկարծ սրանք Ուտիսի կերակուրներ չուտեն: Զանազան պատմություններ էին պատմում Ուտիս տատի և Պաս պապի հակադրությունների մասին, որն արտահայտվում էր նրանց մշտական վեճով: Ըստ լոռեցիների Պաս պապը լոբոճաշի մեծ շերեփով խփում էր տատի (Ուտիսի) գլխին և դուրս անում տնից այն բանի համար, որ նա երեխաներին յուղալի – մսեղեն կերակուրներով է կերակրում և հոգին տկարացնում գեր մարմնի մեջ: Իսկ պասի վերջում ուրախ և առույգ տատն էր գալիս ու, մաճնի յուղոտ շերեփով խփելով Պաս պապի գլխին, դուրս անում նիհար, չորացած

պապին: Այնթափցիները, որոնք փետրագարդ սոխը կոչում էին Խուճուճիկ, Մեծ պասի վերջին օրը այն թաթախում էին մաճնի մեջ և նետում տանիքը: Ըստ նրանց պատկերացումների, սոխը դառնում էր մկաններ, խոհվը՝ թևեր, ինքը՝ Խուլուճիկն ամբողջովին՝ թռչուն, որ թռչում - գնում էր՝ հաջորդ տարին վերադառնալու պայմանով:

Մեծ պասի հենց առաջին օրը ամեն տուն թխում էր յոթ հաստ անալի բաղարջ՝ ի նշան պասի յոթ շաբաթվա:

Բուն Բարեկենդանի նախորդ օրը, Շաբաթ երեկոյան, ժամերգության ընթացքում եկեղեցու խորանի վարագույրը քաշվում է, խորանը ծածակվում է, և այսպես շարունակվում է քառասունօրյա պասի ընթացքում: Պասի ժամանակ մատուցվում է փակ պատարագ. ամուսնություններ տեղի չեն ունենում, արգելվում է մատաղ անել, մինչ թույլատրվում է մկրտություն և նշանդրեք կատարել:

Մեծ Պահքի (պաս) ամեն կիրակին ուներ իր առանձին տոնատերը: Առաջին կիրակին նվիրված էր Արտաքսմանը, երկրորդը՝ Անառակին, երրորդը՝ Տնտեսին, չորրորդը՝ Դատավորին, հինգերորդը՝ Գալստյան, վեցերորդը՝ Ծաղկագարդին և յոթերորդը՝ Քրիստոսի հարությանը: Պասի ընթացքում կենդանական ծագում ունեցող սնունդ չէին ուտում, այլ միայն բուսական:

### *Բարեկենդանի երգեր*

#### *Գնացեք, տեսեք*

Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել այծը.-

Գնացին տեսան՝ գայլն է կերել այծը:

Գայլն ու այծը,

Այծն ու գայլը.

Ձեզ՝ Բարեկենդան,

Մեզ՝ բարի Զատիկ:

Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել գայլը.-

Գնացին տեսան՝ արջն է կերել գայլը:

Արջն ու գայլը,

Գայլն ու այծը.

Ձեզ՝ Բարեկենդան,

Մեզ՝ բարի Զատիկ:

Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել արջը.-

Գնացին տեսան՝ թուրն է կերել արջը:



Թուրն ու արջը,  
Արջն ու գայլը,  
Գայլն ու այծը.  
Ձեզ՝ Բարեկենդան,  
Մեզ՝ բարի Ջատիկ:

Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել թուրը.-  
Գնացին տեսան՝ ժանգն է կերել թուրը:  
Ժանգն ու թուրը,  
Թուրն ու արջը,  
Արջն ու գայլը,  
Գայլն ու այծը.  
Ձեզ՝ Բարեկենդան,  
Մեզ՝ բարի Ջատիկ:

Գնացեք, տեսեք՝ ո՞վ է կերել ժանգը.-  
Գնացին տեսան՝ հողն է կերել ժանգը:  
Հողն ու ժանգը,  
Ժանգն ու թուրը,  
Թուրն ու արջը,  
Արջն ու գայլը,  
Գայլն ու այծը.  
Ձեզ՝ Բարեկենդան,  
Մեզ՝ բարի Ջատիկ:

### ***Էն դիզան***

Էն դիզան, բետ - բետ դիզան, տեսեք էն ո՞րն է:  
Էն դիզան, բետ - բետ դիզան՝ գեղի ռեսներն են:

Ճնճղներ ճըլվըլալեն, տեսեք էն ո՞րն է:  
Ճնճղներ ճըլվըլալեն՝ էն տիրացուքն են:

Էն արև, երկնուց արև, տեսեք էն ո՞րն է:  
Էն արև, երկնուց արև՝ էն թագավորն է:

Էն լուսին ամպերու մեջ, տեսեք էն ո՞րն է:

Էն լուսին ամպերու մեջ՝ էն թագուհին է:

Ցախավել իղև դռան, տեսեք էն ո՞րն է:

Ցախավել իղև դռան՝ էն մըշակներն են:

Շունն էկավ պարկն ի բերան, տեսեք էն ո՞րն է:

Շունն էկավ պարկն ի բերան՝ գեղի գգիրն է:

Մուկն էկավ այրաթաթախ, տեսեք էն ո՞րն է:

Մուկն էկավ այրաթաթախ, էն ջաղացպանն է:

### **Բարեկենդանի տոնական համալիրը**

Հայոց մեծ Բարեկենդան տոնանունը հանդիպում է բազմաթիվ տարբերակումներով՝ Բարիկենդան, Բարեկենանք, Բարի կենթներին, Բերկենտենք կամ Բենկերտեք, Բարկենդանք, Պարկենդանք, Պարկինտին, Խամիգաքքրիա և այլն: Բարեկենդանի գրառումներն սկսվել են 19-րդ դարի երկրորդ կեսից: Այդ շրջանում տոնն իր հիմնական կերպարանքով պահպանված էր: Բարեկենդանը կենցաղում մնաց մինչև 20-րդ դարի առաջին կեսը, իսկ երկրորդ կեսին, ի տարբերություն մյուս տոների, աննկատ ետ մղվեց, պահպանելով միայն եզակի բնակավայրերում: Տարեց սերունդն առ այսօր հիշում է Բարեկենդանն իբրև, և մերօրյա գրառումները նույնպես գալիս են վերականգնելու տոնի կերպարները, բայց տոնը՝ որպես այդպիսին, այլևս չի կենցաղավարում:

### **Տոնի ժամանակը և դրա հետ կապված խորհրդանիշներ**

Բարեկենդանը շարժական տոն է: Պատմական Հայաստանի որոշ ազգագրական շրջաններում Մեծ պասին նախորդող վերջին երեք օրը համարվում է Բուն Բարեկենդան, իսկ վերջին կիրակին Բուն Բարեկենդան է համարվում ամենուրեք: Մուշում վերջին երկու օրերը ծիսավորված էին: Երզնկայում Բարեկենդանը սկսվում էր Մեծ Պասից 8 օր առաջ, իսկ բուն տոնը՝ 3 օր առաջ: Որոշ վայրերում Բարեկենդանը տևում էր երկու շաբաթ՝ Ս.Սարգսի պասից մինչև Մեծ Պահք: Երկու շաբաթվա հիշատակությունը կապված է շատ ավելի ուշ ծագում ունեցող այն սովորույթի հետ, երբ Ս.Սարգիսը նշվում է Ջատիկից ոչ թե 11, այլ՝ 9 շաբաթ առաջ: Հայտնի է, որ Ջատիկի ծայրաժամկետներն են մարտի 22-ապրիլի 25: Այս կետերից 7 շաբաթ ետ գնալով կստանանք.

**Ջատիկը՝ մարտի 22ին-Բարեկենդանը՝ փետրվարի 1-ին:**

**Ջատիկը ապրիլի 25-ին-Բարեկենդանը՝ մարտի 7-ին:**

Էֆեմերտեն առաջարկում է Բարեկենդանի հաշվարկի ավելի պարզ ձև՝ ըստ տարեգրի: Տարեգրի թիվը համապատասխանում է փետրվարի այն օրվան, որի հետ համընկնում է Բարեկենդանը: Եթե տարեգիրը փետրվարի օրերի քանակից մեծ է, ուրեմն՝ մնացած թվերը հաշվվում են մարտի 1-ից: Հետևաբար մեր տարեգիր ունեցող տարիներին Բարեկենդանը փետրվարի 1-ին է, իսկ 35 տարեգիր ունեցող տարիներին՝ մարտի 7-ին: Այս հաշվարկով՝ Բարեկենդանը կարող էր նշվել ամենաշուտը փետրվարի 7-ին և ամենաուշը՝ մարտի 7-ին:

### **Բարեկենդանի ծիսական բաղադրատարրերը**

Ավելի քան 100 տարվա ընթացքում գրառված նյութերում առավել հետևողականորեն նկարագրվում են Բարեկենդանի տոնական համալիրի կայուն բաղադրատարրերը՝ Այգուց, տոհմական ճաշկերույթ, հանդիսություն, մրցում, մարզախաղ, Փաշա, հարսանիք և հարսանեկան թատերախաղ, մատնեխաղ և վեգախաղ, դիմակավորում, ճղոր, պուռմատիկին, Աբեղաթող:

#### **ա. Ճղոր**

Ճղորը կամ ճոճանակը տոմարային տոների մեջ զբաղեցնում է ուրույն և կայուն տեղ: Մատաղահաս աղջիկները ճոպան էին կապում գոմի կամ թոնրատան առաստաղի գերանից և, ճոչվելով, երգում էին ճղորի երգեր:

#### **բ. Պուռմատիկնոջ**

Կամ ծղոտե տիկնիկի հետ կապված արարողություններ:

#### **գ. Նախնիների հետ կապված ծեսեր**

Կանանց այցը գերեզմաններ՝ արխաիկ Այգուցը, Վ.վարդ.Տեր-Մինասյանը միավորում էր Վարդանանց հիշատակի եկեղեցական տոնի հետ: Նոր հանգուցյալի գերեզման էին գնում ողջ ընտանիքով: Կանայք ողբերգում էին, տղամարդիկ գինի և օղի էին խմում:

#### **դ. Տոհմական ճաշկերույթ:**

Բարեկենդանի հանրային սեղանն աչքի էր ընկնում մտով կերակուրների և խմիչքի առատությամբ, և պատահական չէ, որ Բարեկենդանը երգերում անվանվում է փորեկենդան:

Ճեպիս փարան պարպել է,

Թիվցցի Փուլին զօրել է:

Բարեկենդան, փորեկենդան:

Ե .Հանդիսություններ, պարեր

Կատարվում էին սեռատարիքային առանձին խմբերով և համատեղ: Բարեկենդանին բնորոշ է հանրային պարը, հիմնականում՝ դիոլ-գուռնայի ուղեկցությամբ: Տոնի ընթացքում պարերի գրաված կարևոր դիրքի պատճառով Մշեցիները Բարեկենդանին ասում էին պար-կենդան: Երիտասարդների հավաքները տեղի էին ունենում գյուղամիջում կամ եթե եղանակը թույլ էր տալիս, կալերում: Պարում էին նաև տանիքներին: Սիսիանում և այլուր եղել են տղամարդկանց շուրջպարեր, պարագլուխը ճիպոտ էր պահում ձեռքին, այսինքն՝ առավել խստորեն էր հսկում պարը:

#### գ. Մրցում, մարզախաղ

Խիստ տարածված էր ձիարշավները, գոտեմարտը, լախտին, կամ թուրան: Ծիսական մրցումների տեսակ կարել է համարել փողոցային ծեծկըռտուքը, որն առաջանում էր հարբած երիտասարդների միջև:

#### է. Էշակ պարոնի կամ Փաշայի ծես-խաղ

##### ը. Հարսանիք և հարսանիքի իմաստավորմամբ թատերախաղեր

Բարեկենդանը հարսանիքների և կրկնապսակների շրջան է: Բացի այդ, ազգագրական տարբեր շրջաններում տարածված էին հարսանիքը նմանակող և ծաղրող երիտասարդների և երեխաների թատերախաղեր: Հիմնականում խաղում էին սեռատարիքային նույն խմբի ներկայացուցիչներ :Զանգեզուրի Արծվանիկ գյուղում տղաները խաղում էին հարսի խաղը :Այլ վայրերին բնորոշ էին փոքրիկ աղջիկների երգերով և պարերով ուղեկցվող խնամոցիկները:

##### թ.Մատնեխաղ, վեգախաղ և այլ ծիսական խաղեր

Վեգ խաղում էին տանիքների վրա: Մատնեխաղ՝ տան մեջ, սեղանի շուրջ: Այս և նման խաղերը պարունակում էին գուշակության տարրեր:

##### ժ.Թարս օրեր

Բարեկենդանի օրերը համարվում էին թարս, տեր ու ծառա, մեծ ու փոքր, կին և տղամարդ փոխվում էին սոցիալական դերերով: Թարս օրերի խորհրդանիշն էր Բախլախորանը, Բարեկենդանին հաջորդող երկուշաբթին կամ Մեծ պասի առաջին օրը, երբ կանայք կարող էին իրենց գործը թողնել տղամարդկանց, իսկ իրենք՝ քեֆ անել և հարբել: Ընդունված էին կենդանիների դիմակներով ծպտված, մրոտված երեխաների և երիտասարդների երթ- խաղերը: Սրանք վախեցնում էին երեխաներին և զվարճացնում մեծերին: Դիմակավորված երիտասարդները Վանում կոչվում էին խաղք, Զավախքում՝ մեյմուն: Հավանաբար, հնում սովորական էր ծպտված երիտասարդների շրջերթը տնետուն և նվերներ պահանջելը:

## Ժ.Աբեղաթող, Վարդապետաթող, կամ Մոնթրթող

Վանքում կատարվող Բարեկենդանի արարողությունների մասին տեղեկություններ հիմնականում հանդիպում են Վ.վարդ. Տեր-Մինասյանի աշխատություններում: Ըստ հեղինակի, այդ օրը վերանում էին վերադաս-ստորադաս հարաբերությունները կրոնավորների միջև, հրավիրվում էին աշուղներ, և վանքի պատերը լցվում էին ամենատարբեր ժանրերի ժողովրդական երգերով, տեղի էին ունենում ըմբշամարտ և մրցույթ, ստորադաս վանականներից մեկը դառնում էր ժամանակավոր տիրակալ: Աբեղաթողը, ըստ էության, ոչ այլ ինչ է, քան վանքում կատարվող Խան-Փաշայի թատերախաղ:

## Ծիծաղ, հումոր և մահ

Բարեկենդանին բնորոշ էր ծաղրը, անհատների և հասարակության բոլոր թերությունները մատնանշելը, ընդ որում ոչ ոք իրավունք չուներ վիրավորվելու:

1. Ծիծաղ-դատավարության առաջին զուգահեռը գիտական գրականության մեջ քանիցս քննարկված Բարեկենդանի դատավորական խաղերն են: Խանը, Փածան, Բախուսը կամ Կարնավալը դատում են ծիծաղի ներքո, հետո իրենք են դատապարտվում, պատժվում, թաղվում կամ ջուրն են նետվում՝ դարձյալ ծիծաղի ներքո: Կարնավալի ծիսական համալիրում ծիծաղը հավասար է մահվանը, իսկ մահը՝ ծիծաղ-վերածննդին:

## Ժամանակավոր արքա և դատավորական խաղեր

Բարեկենդանի բազմաշերտ կերպարը, որ հանդես է գալիս տարբեր անուններով, ավանակին նստած արքան է՝ Շահը, բեակը, Փաշան, Խանը, էջ պարոնը, Քյոսան, Ռեսը, Ղադին, Խանը, Փոքսուղը : Սա տրիքստեր-խեղկատակն է, որ պահել է կարնավալի արքայի մի շարք գործառույթներ: Նա դատավոր է, նա մահացած է ձևանում, նրան ծեծում ու ծանակում են: Ազատ, երբեմն նույնիսկ սանձարձակ բարեկենդանյան միջավայրում Փաշան ամենագործունյա կերպարն է:

2. Խան-Փաշա խաղը կարելի է դիտել իբրև բուն խաղ և իբրև թատերայնված գործողություն: Նույն փաստերը տարբեր մոտեցումների դեպքում կարող են ստանալ տարբեր մեկնաբանություններ: Այստեղ ղնդիրն այս ծեսը որպես տոմարային ծես դիտարկելն է:

Խան-Փաշա խաղ-ծեսի հիմնական գործողություններն են.

ա. շրջերթ,

բ. դատավարություն-գոհաբերություն,

գ. ճակատամարտ-մրցում,

դ. գլխավոր հերոսի նսեմացում և վտարում,

ե. ճաշկերույթ:

Այս հիմնական բաղադրիչները կարող են հանդես գալ տարբեր հաջորդականությամբ, որոշ հատվածներ կարող են դուրս մնալ սոցիալական կամ պատմական պատճառներով: Սակայն իր ամբողջական ձևի մեջ խաղը լիովին համապատասխանում է Օ.Ֆրեյդենբերգի սխեմային՝ երթ-պայքար-գոհաբերություն-սնունդ:

### Դիմակավորում

Բարեկենդանի ամենաբնորոշ գծերից է դիմակավորումը: Բարեկենդանին ծպտվելու, կերպարանափոփվելու մասին պահպանվել են մի շարք տեղեկություններ:

Դիմակավորումը՝ որպես ծեսի բաղադրամաս, կապվում է նախնու պաշտամունքի հետ, և այս թեման բավական ուսումնասիրված է:

Հայկական Բարեկենդանն ունեցել է յուրօրինակ Ձմեռ պապ: Վ.վ. Տեր-Մինասյանը հիշատակում է Ս.Սահակ Պարթևի տոնին տները շրջող և օրհնող Մենծ-Պապուկին: Մենծ-Պապուկի գալն ազդարարում է Բարեկենդանի սկիզբը: Ա.արք. Մանուկյանը նույնպես հիշատակում է Բարեկենդանին եկող Պարթև-Մենծ Պապուկին, որը գալիս էր քոլոզը գլխին, գավազանը ձեռքին և ոչխարի մորթին հագած: Նա մոտենում էր գինու կարասին, յուրաքանչյուրին մի բաժակ գինի տալիս և ասում.

-Եկավ Մենծ-պապուկը, հազար բարով մեր Բարեկենդանին:

Գինի բաժանող է Պարթև-Պապուկը, սրանով իսկ՝ առավել մոտենալով Կաղանդի նվերներ բաժանող և ոչինչ չպահանջող Պապին: Պարթև-Պապուկը համեմատաբար ուշ շրջանի արգասիք է և կարող է կապված լինել գինի բաշխող Դիոնիսի կամ Սաբազիսի երբեմնի պաշտամունքների հետ:

Դիմակավորված կերպարներից է Բարեկենդանի Բուն օրվա երեկեյան տներում հայտնվող մեյմունը: Ջավաղքում նմանատիպ կերպարը կոչվում է դադի: Նոր Նախիջևանի Ջամալները, այսինքն՝ դիմակավորները, զանազան խմբեր էին կազմում, այդ թվում՝ հարսանքավորների, հոգևորականների, բոջանների, գորականների և այլն: Նրանք այցելում էին տները, չէին խոսում, բայց երգում և պարում էին:

1. Վեզը կարող է ունենալ 6 դիրք, որտեղից էլ առաջացել է հեքսագրամա հասկացությունը: Այս նույն երևույթն է հիմք ծառայել 2 ինական Գիրք Գրոցի՝ Փոփոխությունների գրքի, համար: Յուզա հասկացությամբ Հնդիկները բնորոշում են տիեզերական խոշոր ժամանակահատվածները, որոնք համապատասխանում են մ իջերկրածովյան ոսկե, արծաթե և այլ դարերին: Եվ այս յուզա հասկացությունը նույնպես առաջացել է վեգախաղից. Այդպես էին կոչվում վեգի կողմերը: Ուշագրավ է, որ համաձայն այս տեսության, ժամանակակից մարդու տիեզերաշրջանը սկսվել է Բ.ա. 3102թ. Փետրվարի 17-ից -18-ի կեսգիշերին: Եվ այս շրջանը Բարեկենդանի շրջանն էր:

Քանի որ յուզաները չորսն են, կարել է ենթադրել, որ Հնդիկները գործածում էին վեզի միայն չորս կողմերը :Հայկական վեզախաղում նույնպես գործածվում են միայն 4 կողմերը՝ ճուկ, թավ, սալ և կոռ:

Վեզախաղի պրենքների համաձայն, ճուկ գցողը դառնում էր թագավոր կամ բեկ, կոռ գցողը՝ գող, ավանակ և այլն :Հաճախ վեզի միջոցով դարեր էին բաշխվում այլ խաղերի համար: Որպես օրենք, այդ դարերը և խաղերը հեռու չէին Փաշա խաղի բովանդակությունը: Գողին դատում էին, ավանակին հեծնում, ստիպում զոալ: Այսինքն՝ նորից ունենք դատ-տանջանք-գոհաբերություն բովանդակային կմաղքը, որտեղ վեզը կատարում էր վիճակահանության դեր:

Վեզախաղի հատուկ դերը Բարեկենդանի ժամանակ նշանակում է, որ այդ օրը որոշվում էր աշխարհի ճակատագիրը: Որոշակիորեն լինելով ամանորյա գուշակությունների զուգահեռը, վեզախաղը տարբերվում է դրանցից իր ունիվերսալ բնույթով, քանի որ այստեղ որոշվում էր ոչ թե եղանակը կամ ընտանեկան դրությունը , այլ տիեզերական իրադարձությունները: Դրան զուգահեռ վեզախաղը որոշում, թե ով է լինելու արքան, իսկ ով՝ ստրուկը: Քանի որ ստրկությունը արքա-արևի մահվան խորհրդանիշն է, ուստի և վեզախաղը կրկնապատկում է Բարեկենդանի մահ-վերածնունդ հիմնական գաղափարը: Եթե իմաստուն-աստվածությունները կատարում են միջնորդի դեր, իսկ ամռան և ձմռան պայքարում պարտվող փոխանորդ-արքան է, ուրեմն և վեզախաղի հետ դիցաբանության մեջ կապված են մի կողմից իմաստուններ Թոթը և Հերմեսը, մյուս կողմից՝ Դիոնիսի Փոխանորդ պատանի Զագրեսը:

## 2.Վեզախաղի երգերը.

Վեզախաղի երգերն անսպասելիորեն նոր նյութ են տալիս Բարեկենդանի իմաստը ուսումնասիրելու համար: Բանաստեղծական բոլոր 4 տեքստերը միևնույն երգի տարբերակներն են: Դրանցից ոչ մեկը չունի այուժե և չի կրկնապատկում վիճակահանության գործողությունը:

Նկարագրվում է ցնցոտիներով, տրեխներով այծակերպ և միջատաման մագոտ մի էակ, որ հագել է ոսկե կոճակներով զգեստ և դրել ալ գլխարկ, մեծ ամբարի փոքրիկ պարոն, ոսկե ամանը ձեռքին, ետևից գցած ջութակով: Հերոսներից է նաև պառավ մոզին:

Վեզախաղի երգերի գրեթե բոլոր տարբերակներում առկա է սև հավ մորթելու մոտիվը: Մանկախաղաց, կամ թոնոցիկ, երգերում նույնպես ունենք սև հավ մոտիվը իբրև թափառիկ բանաձևի անփոփոխ բաղադրիչ.

Հա թոի, թոի, թոցնեմ,

Սև հավու միս կերցնեմ...

Ռ. Գրիգորյանը գրում է. Հայաստանի համարյա բոլոր գավառներում երեխայի ծննդին հաջորդում է սև հավ մորթելը, մատաղելը, քանի որ ըստ հին սնահավատի, երեխային կարող են չարքերը տանել, իսկ հավը չարախափան է...: Հետևաբար, սև հավը պահապան նախնու խորհրդանիշն է, իսկ նրա միսն ուտելով երեխան հաղորդակցվում է նրա մոգական կարողությանը: Նույն ժանրի երգերից մեկում հանդիպում ենք «սև հավի կատար ըլիս» բարեմաղթանքին, ինչն ապացուցում է այդ թռչունի հատուկ նշանակությունը և պահպանող դերը, ինչպես նաև մատնանշում է հավի կատար-թագ գուգահեռը: Սև հավի հավկիթ են պահանջում անձրևաբեր ծեսերի և Ծաղկազարդի շրջերթերի մասնակիցները:

Սև հավերը միշտ էլ դիտվել են իբրև սրբազան թռչուններ, իսկ նրանց հավկիթները մինչ օրս էլ բարձր են գնահատվում: Բացի այդ, սև հավը նաև մոգության, գուշակության, միստիկ գիտելիքի խորհրդանիշն է. Հիշենք թեկուզ Ծննդյան տոնի հետ կապված այն ծեսը, որում երեխայի եղունգին սև հավի արյուն են քսում, որ երեխան եղունգով ախարդող դառնա: Հավով է պատրաստվում ծիսական հարիսան: Այսպիսով, վեգախաղի երգերում առկա է գերբնական մի էակ, որին զոհաբերվում է սև հավը, հնարավոր է, նաև ծեր կովը, երկուսն էլ ծեր կախարդուհու կամ ստորին աշխարհի դիցուհու աստիճաններ: Այդ կենդանու միսն ուտողը և ճուկ գցողը արքա է դառնում և խորհրդանշում է գալիք լուսնային տարին:

Քանի, որ վեգախաղը վիճակահանություն էր, Ակլե-տյուկլե կամ Ակեդուկե սկզբնատողով տեքստերը, կորցնելով երաժշտական բաղադրիչը և կապը վեգախաղի հետ, հետադիմել են և դարձել սովորական խաղասելուկ-համբանքներ և այդ տեսքով գոյատևել մինչև մեր օրերը: Որպես ծիսական երգեր դրանք մոռացվել են, թեև պահպանվել են վիճակահանության գործառույթ:

Ինչպես երևում է Հավ. 2 NN32 և 33 երգերից, մատնեխաղի երգերը շատ ավելի աղքատ են իրենց ովանդակությամբ: Պետք է ենթադրել, որ մատնեխաղն ինքը ոչ շատ վաղեմի անցյալում հայերի կողմից փոխառված է որևէ այլ ժողովրդից: Դիտարկվող ժամանակաշրջանում 19-20-րդ դդ. Վեգ են խաղացել հիմնականում երեխաները, իսկ մատնեխաղ՝ մեծահասակ տղամարդիկ, կարծում են, որ մատնեխաղը դուրս է մղել բնիկ ծիսական վեգախաղին: Սակայն նույնիսկ իր հետադիմաց ձևով այդ խաղը կապված է Արեգակ-մատանու հետ, որն անհետանու և նորից հայտնվում է: Այստեղից էլ առավոտի և գարնան կերպարները երգերում:

### **Հարսանեկան երգերը Բարեկենդանի համալիրում**

Բարեկենդանին երիտասարդները հնարավորություն ունեն շփվելու միմյանց հետ, բաժանվելով իրական և սուտլիկ, ժամանակվոր գույգերի: Հարսանիքների առատությունն



է գուցե պատճառը, որ այս տոնի երգերի մեջ հանդիպում են հարսանեկան երգերի, օրինակ, Գնցեք բերեք, կամ Էն դիզան երգերի տարբերակներ: Հարսանեկան շարքին են պատկանում նաև Բարեկենդանի ծիսական համալիրում հայտնված Աբեղաթողի երգերը:

Մ.Ավագյանը նկարագրում է Տախ ախչկան տարան իրկան կամ՝ <<Կակո-Մակոն նշնվեց>> թատերական խաղը, որի մեջ բոլոր դերերում երիտասարդ տղամարդիկ էին, և որի բոլոր հերոսները երգում էին: Մա յուրատեսակ ժողովրդական օպերետ է, որը, ցավոք, եզակի նմուշ է հայ ժողովրդի ֆուկլորում:

### **Նար Նախիջևանի Խնամոցիկի երգեր**

Բարեկենդանի՝ որպես ամուսնական զույգերին և ընդհանրապես ամուսնությունը, պտղաբերությունը խրախուսող տոնի մասին է խոսում նաև հարսների և տարբեր տարիքի, հատկապես 8-14 տարեկան, աղջիկների հատուկ ծեսը տոնական համալիրում՝ սուտիկ հարսնիքները:

Բուն Խնամոցիկ խաղի կապը Բարեկենդանի հետ մեր դիտարկած նյութի մեջ արձանագրվում է միայն Մուշում, երեխաները հարսանիք են խաղացել և հատուկ երգեր երգել նաև տոնից դուրս, թեև շատ հավանական է, որ այդ երգերը կատարվել են Բարեկենդանի ժամանակ նաև այլ ազգագրական շրջաններում: Ամեն դեպքում, այս խաղ-արարողությունը ուղեկցվել է ծիսական երգերով:

Տըմբըլիկին պապուկը երգը զգալիորեն տարբերվում է այլ մանկական երգերից քանաստեղծական տեքստի հետևողական սյուժեով և բավականին զարգացած մեղեդիով: Նուրբ հումորով համեմված տեքստը ծաղրում-նմանակում է հարսնառի արարողությունը. Թմբլիկ, հիմարավուն հարս, կույր կնքահայր և այլն: Այստեղ գալիս է հարսի, և ոչ թե փեսա հայրը, վերջում էլ հարսի հորը մենակ ճամփում են տուն :Ենթադրելի է նաև, որ խոսքն այստեղ հարսին դարձ տանելու արարողության մասին է. Աներոջը խաբում են, և Տըմբըլիկը մնում է փեսայի տանը: Հարցուպատասխանային բնույթը և խոսքային ծիսական բանաձևերը հուշում են, որ տեքստը ծիսական է ծագումով և ոչ միայն՝ որպես ծեսի նմանակում: Ծիսական մի շարք տեքստերի նման, այստեղ էլ նկարագրվում է գործողություն և շեշտվում է ուրախ, տոնական միջավայրը: Նույն զվարթ տրամադրությունն է տիրում երաժշտության մեջ :

### **ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԵՎ ՄԵԾ ՊԱՍ**

Բուն Բարեկենդանը Հայոց հնագայն տոներից է, որը Հայ եկեղեցու սահմանած բարեկենդաններից գլխավորն է և տոնվում է Ջատիկից յոթ շաբաթ առաջ: Հնում Բուն Բարեկենդանին թույլատրվում էր առատ ուտելիք, կերուխում, տանտիկիններն իրենց

պահած մթերքներով շռայլորեն հյուրասիրում էին ընտանիքի անդամներին եւ հյուրերին: Տոնին պատրաստվում և մասնակցում էին բոլորը՝ մեծ, թե փոքր: Չնայած ամենուր դեռ ձյուն էր, սակայն դա չէր խանգարում, որ մարդիկ անձնատուր լինեն զվարճություններին: Երկու- երեք օր առաջ կանայք եւ տղամարդիկ դադարում էին աշխատել, զանազան խաղեր էին խաղում, զվարճանում երեխաների պես: Ծերունիները, առանց քաշվելու միանում էին այս կամ այն խմբին՝ «թօփ» խաղալու: Երիտասարդները «սուրմագիլի» կամ «կունդի» էին խաղում: Աղջիկներն առանձին խումբ էին կազմում և ճլորթի ընկնում: Այդ ամենը զուգորդվում էր ինքնատիպ զբոսախնջույքներով, դափ ու զուռնով:

Տոնի անբաժան մասն էին ժողովրդական ներկայացումներն ու դիմակավոր խաղերը (առհասարակ, դեռ հնագույն ժամանակներում, տոնախմբությունների, թատերական ներկայացումների կամ որսորդության ընթացքում հայերը դիմակ հագնելու սովորություն ունեին): Ներկայացումների ժամանակ ծիծաղախառն կատակներով քննադատության էին ենթարկվում մեծավորներն ու իշխանավորները: Հավաքվում էին մեծ ու փոքր, մի կողմ էին դրվում պետական կամ եկեղեցական օրենքները, ամեն մարդ՝ առանց քաշվելու ասում էր իր խոսքը: **Փաստորեն, Բուն Բարեկենդանը, բացի խրախճանքից, կեր ու խումից, նաև ազատության օր էր:**

Բարեկենդանի օրը մինչև իսկ չբավորներն ու աղքատներն էին վայելում տոնական սեղանը: Այդ օրը հիշում էին նաև պանդխտության մեջ գտնվողներին ու երգում էին պանդխտության հատուկ տաղեր:

Բարեկենդանի երեկոն բարեկամներն ու հարազատները միասին էին անցկացնում: Յուրաքանչյուրն իր հետ ուտելիք էր բերում, կուշտ ուտում էին ու խմում, քանզի առջեւում յոթշաբաթյա պասն էր :Վերջում ուտում էին մի-մի ձու՝ բերանը «կողպելու» համար, որպեսզի Ջատիկին դարձյալ ձվով «բանան» այն:

Բարեկենդանի օրը վանքերում կոչվում էր նաև Աբեղաթող: Ատ. Մալխասյանցի ստուգաբանությամբ՝ բառը կազմված է «աբեղա» և «թողուլ» (թողնել, արձակել) բառերից և նշանակում է աբեղաների թողություն, արձակում վանական խիստ կյանքի կանոններից: Ազգային հինավուրց տոնը այդպես է կոչվել քրիստոնեության հաստատումից հետո, որով Հայ եկեղեցին խստակենցաղ հոգեւորականների համար սահմանել է որոշ ազատություններ: Այստեղ եւս մուտք են գործել բարեկենդանյան խաղերն ու խրախճանքները:

Լինելով շարժական, տոնը կատարվում էր փետրվարին կամ մարտի սկզբին և, հավանաբար, կապ ուներ գարնան սկսվելու հետ: Եվ պատահական չէին զվարճությունները, որոնք արթնացող բնությանը ուրախ դիմավորելու, գարնան հետ՝ նաև

մարդկանց վերակենդանանալու խորհուրդը ունեին: Ու մարդիկ մաղթում էին միմյանց՝  
բարի կենդանություն...

Բուն Բարեկենդանին հաջորդում է Մեծ ՊԱՍԸ, որը պահվում է մինչև Զատիկ: Մեծ է  
կոչվում պասերից ամենաերկարը լինելու համար, այն տևում է քառասուն օր, ուստի  
կոչվում է նաև Քառասնորդական (քա- ռասնորդական պահքը եկեղեցին սահմանեց ի  
հիշատակ Քրիստոսի քառասուն օր անապատում առանձնանալուն, որոնք նա  
անցկացրեց աղոթելով, ծոմապահությամբ և ապաշխարհությամբ), ժամանակին անվան-  
վել է նաև Աղ ու Հաց (նախկինում Մեծ Պասի որոշ օրերին միայն աղ ու հաց էին ուտում  
կամ ծոմը ավարտում էին աղ ու հացով): Մեծ կամ Քառասնօրյա պասը բացի կաթնեղենից,  
մսեղենից, ձկնեղենից, ձվից հրաժարվելուց, նաև ինքնաքննության, զոջումի,  
ապաշխարհության, հոգևոր դաստիարակության ու թողության մի յուրօրինակ շրջան է:

Մեծ Պասը ունեցել է և կարևոր առողջապահական իմաստավորում, անմիջապես  
Բարեկենդանին հաջորդելով, երբ մարդիկ օրերն անց էին կացնում ճոխ կերուխումերով,  
օգտագործելով օրգանիզմի համար դժվարամարս կերակուրներ, այն սահմանում էր  
պահեցողության կանոններ, որպեսզի տարվա մեջ մի որոշակի շրջան յուրաքանչյուրը  
պարտադրված լիներ հրաժարվելու ճարպային ուտելիքներից:

Ժամանակին Մեծ Պասը պահվում էր մեծ երկյուղածությամբ, խստապահանջությամբ ու  
ջերմեռանդությամբ: Այդ օրերին ամուսնություններ տեղի չէին ունենում, թույլատրվում էր  
միայն մկրտություն և նշանդրեք: Բացի եկեղեցական կանոններից, գոյություն ունեին նաև  
ժողովրդական խիստ սովորություններ, որոնք նույնիսկ երեխաներին արգելում էին լուծել  
կամ խախտել պասը:

Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում Մեծ Պասն սկսում էին Ակլատիզի կամ Ախլոճի  
պատրաստումով, որն ուներ հետևյալ տեսքը, վերցնում էին մեկ կարտոֆիլ կամ սոխ, կամ  
խմորից տիկնիկ էին պատրաստում և վրան ամրացնում յոթ փետուր, չորսը՝ սպիտակ,  
երեքը՝ սև (սպիտակ փետուրները խորհրդանշում էին ձմռան ձյունը, սևերը՝ գարնան  
օրերը, երբ երկիրը երեւում է սև հողով ու կանաչով): Այդ յոթ փետուրները խորհրդանշում  
էին Մեծ Պասի յոթ շաբաթները, որոնք տանտիկինը յուրաքանչյուր շաբաթը լրանալուց  
հետո, հերթով պոկում էր:

Ակլատիզը կախում էին թոնրատանը կամ երդիկից, նրա վրա ամրացնում էին նաև  
մանրիկ քարեր ու կարմիր պղպեղ, ով պասը լուծեր, քարերը կարող էին ընկնել նրա գլխին,  
իսկ պղպեղը՝ կայրեր բերանը: Ըստ ավանդության, Մեծ Պասի վերջին օրը Ակլատիզը  
թոչուն էր դառնում և հեռանում՝ նորից գալու իրավունքով:

**Նախիջևանցիները** Մեծ Պասն անվանում էին Աղացք, աղ ու հաց, ուտում էին միայն  
բանջար, աղցան, խաշիլ:

Մեծ Պասի կեսը կոչվում է Միջինք, հիշեցնելով, որ պասը հասել է իր կեսին: Այդ օրը մի-մի հատ բաղարջ էին թխում՝ Միջունք, մեջը դնում ուլունք կամ դրամ և բաժանում տան բոլոր անդամներին, բաժին էր հանվում նաև անասուններին, հողին: Ուլունքը կամ դրամը ում բաժնից որ դուրս գար, այդ տարվա առատությունն ու հաջողությունները նրանն էին: Մեծ Պասը լուծվում էր Ջատիկին և բացվում ձվով ու ձկնեղենով:

Ինչպես Ավետարանն է պատվիրում. «Ուտողը թող չանգոսնի չուտողին և փոխադարձաբար չուտողն էլ թող չքննադատի ուտողին: Թող յուրաքանչյուր ոք իր միտքը հաճեցնի»:

Մեծ Պասի կարևոր խորհուրդն է՝ առանց ինքնաքննության, գոջումի ու առաքինի գործերի, պահեցողությունը արժեք չի կարող ներկայացնել:

### **Բարեկենդանի ծեսը Հայաստանում**

Բարեկենդան բառացի նշանակում է կենդանություն, բարի կյանք: Տոնը, հավանաբար, կապ է ունեցել զարնան սկսվելու հետ: Եվ պատահական չէին զվարճությունները, որոնք արթնացող բնությանը ուրախ դիմավորելու, մարդկանց վերակենդանացնելու խորհուրդն ունեին: Ու մարդիկ մաղթում էին միմյանց՝ բարի կենդանություն: Տոնին պատրաստվում և մասնակցում էին բոլորը՝ մեծ, թե փոքր:

Երկու- երեք օր առաջ կանայք և տղամարդիկ դադարում էին աշխատել, զանազան խաղեր էին խաղում, զվարճանում երեխաների պես: Հավաքվում էին մեծ ու փոքր, մի կողմ էին դրվում պետական կամ եկեղեցական օրենքները, ամեն մարդ առանց քաշվելու ասում էր իր խոսքը: Բուն Բարեկենդանը բացի խրախճանքից, կեր ու խումից, նաև ազատության օր էր: Այդ օրը հիշվում էին նաև պանդխտության մեջ գտնվողներին ու երգում էին հատուկ տաղեր: Բարեկենդանի երեկոն բարեկամներն ու հարազատները միասին էին անցկացնում: Կուշտ ուտում էին ու խմում, քանզի առջևում յոթշաբաթյա պասն էր: Ամենավերջում ուտում էին ձու՝ բերանը կողպելու համար, որպեսզի Ջատիկին դարձյալ ձվով այն բանան:

Նույնիսկ եկեղեցին է այդ օրը խստակենցաղ հոգևորականների համար սահմանել որոշ ազատություններ: Այստեղ ևս մուտք են գործել բարեկենդանյան խաղերն ու խրախճանքները:

### **Բարեկենդանը՝ քրիստոնեական տոն**

Մեծ պահքի բարեկենդանը կոչվում է Բուն Բարեկենդան, քանի որ նախորդում է ամենաերկար պահքին: Բարեկենդանը մարդու երջանկության հիշատակն է, որը դրախտում վայելում էին Ադամն ու Եվան: Այն նաև դրախտային կյանքի օրինակն է, որտեղ մարդուն արտոնված էր ճաշակել բոլոր պտուղները, բացառությամբ բարու և

չարի՝ գիտության ծառի պտղից, որը պահքի խորհրդանիշն է: Բարեկենդանն առաքինությունների արտահայտությունն է: Այդ օրը մարդիկ սզից անցնում են ուրախության, չարչարանքից՝ խաղաղության: Այս ընկալմամբ է, որ յուրաքանչյուր քրիստոնյա հոգու խոնարհումով, ապաշխարությամբ, պահքով և ողորմության հույսով սկսում է Մեծ պահքի 40-օրյա ճանապարհը: Այն տևում է 48 օր՝ Բուն Բարեկենդանից մինչև Ս. Հարության՝ Չատիկի տոնը: Պահքի շրջանում օգտագործում են բացառապես բուսական ծագում ունեցող սննդամթերք: Պահքի ընթացքում հրաժարվում են ոչ միայն որոշակի կերակուրներից, այլև մոլի սովորություններից, շատախոսությունից, ստախոսությունից, հայհոյանքից և այլ մեղքերից: Կերակրից հրաժարվելն առանց մեղքից հետ կանգնելու անօգուտ է: «Լեռան քարոզում» Քրիստոս պահքի մասին ասում է. «Երբ ծոմ պահեք, տրտմերես մի լինեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսներն այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երևան, թե ծոմ են պահում, ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ իսկ է նրանց վարձը, այսինքն՝ մարդկանց երևալը և նրանցից գովվելը: Այլ երբ դու ծոմ պահես, օծի քո գլուխը և լվա քո երեսը, որպեսզի չերևաս մարդկանց ծոմ պահող, այլ քո Հորը՝ գաղտնաբար, և քո հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ» (Մատթ. 6:16-18): Մեծ Պահքի 40 օրը խորհրդանշում է անապատում Քրիստոսի քառասնօրյա աղոթքի, ծոմապահության և ապաշխարության շրջանը: Իր մկրտությունից հետո Հիսուս «հոգով անապատ առաջնորդվեց ու քառասուն օր փորձվեց սատանայից: Չկերավ ու չխմեց այն օրերին» (Ղուկ. 4:1-3):

Բուն Բարեկենդանի նախորդ օրը, Շաբաթ երեկոյան, ժամերգության ընթացքում եկեղեցու խորանի վարագույրը քաշվում է, խորանը ծածկվում է և այսպես շարունակվում է քառասունօրյա պասի ընթացքում: Պասի ժամանակ մատուցվում է փակ պատարագ. ամուսնություններ տեղի չեն ունենում, արգելվում է մատաղ անել, մինչ թույլատրվում է մկրտություն և նշանդրեք կատարել:

Եկեղեցին, Քրիստոսի օրինակի հետևողությամբ, քառասունօրյա պահք է հաստատում, հավատացյալներին քառասուն օր խոկումի, աղոթքի, ինքնաքննության ու զղջումի առիթ տալու համար: Կարևոր սրբոց տոների առթիվ, երբ մատուցվում է հանդիսավոր Պատարագ, վարագույրը քաշվում է և տեղի է ունենում բաց պատարագ:

### **Ներկայացումներ**

Ահա եկավ հայոց ազգին օրերը,  
 Հանեցեք հիները, հազեք նորերը:  
 Բարեկենդան, փորեկենդան,  
 Բարեկենդան օրեր է,  
 Խելքս գլխես կորեր է...

Բարեկենդանը այնքան սիրված, ժողովրդական, սպասված տոն էր, որ հայ ժողովրդի

կողմից այն ընկալվել է որպես ամենաազգային(հայոց ազգի օրեր), ինչպես նաև ամենաերջանկաբեր տոնը, խրախճանք, ճոխ և առատ ուտելիքներ վայելելու օր: Պարերի, խաղերի, զվարճահանդեսների, թատերախաղերի, այցելությունների և ուրախության երկու շաբաթ: Երեկոյան, երբ խնջույքներից հոգնած մեծերը հավաքվում էին տանը, դուռը բացվում էր աղմուկով, երգով, թմբուկով և ներս էին ընկնում երեխանները: Տղաները հագած էին լինում աղջիկների հագուստ, փոքրերը՝ մեծի, երբեմն՝ ծաղրածուի: Կերպարանափոխված կամ դիմակավորված խմբերով զվարճախաղերը և թատերական ներկայացումները Բարեկենդանի առավել սիրված հանդիսություններն էին: Դրանց մասնակցում էին թե երեխաները, թե մեծահասակները: Արտաքինը պիտի հնարավորին չափ ծիծաղաշարժ լիներ, դեմքերին դնում էին ծիծաղելի դիմակներ կամ մուր, այլուր քսում, ածուխով ներկում: Երեխաները տեսարան էին ներկայացնում գյուղի կյանքից կամ խաղում էին որևէ սրամիտ սյուժե:

### **Զվարճախաղեր**

Երեխաները գետնին փոքրիկ փոսեր են փորում, ապա հերթով մեկը մյուսի հետևից ընկույզը գլորում այնպես, որ առանց նշանակված գծից շեղվելու ընկույզն ընկներ մի փոսի մեջ: Հաջողվածը բոլոր գլորած ընկույզները յուրացնում էր: Մեկ այլ խաղում խաղացողները մի մետր տրամագծով շրջան էին գծում և մեջտեղը ուղիղ գծով ընկույզներ շարում: Երեք-չորս մետր հեռավորությունից գցում էին վեգերը՝ աշխատելով խփել ընկույզներին և գոնե մեկը դուրս հանել շրջանից, որով և շահում էին շարված բոլոր ընկույզները: Ճոճախաղերը գլխավորապես կանանց ու աղջիկների, մասամբ երեխաների խաղերն են: Ճոճվում էին բարձր ծառի հաստ ճյուղից կամ որևէ գերանից օղակով անցկացված պարանի վրա նստելով, կամ երկու պարաններ օղակների մեջ տեղադրված տախտակի վրա նստած կամ կանգնած: Ճոճախաղերը զվարճահանդեսի էին վերածվում, երբ ճոճվողների շուրջ հավաքված բազմության առաջ տվյալ պահին ճոճվողի ոտքերին ճիպոտով հարվածելով պահանջում էին որևէ գաղտնիք ասել: Առավել տարածված էր՝ ստիպել սիրած տղայի անունը բարձրաձայն ասել: Ճոճախաղերը հաճախ վեր էին ածվում մրցախաղերի՝ ով ավելի մեծ կորագծով կճոճվի:

### **Բարեկենդանի խոհանոց**

Բարեկենդանին նախապատվությունը տրվում է մսեղենի, կաթնեղենի առատությանը: Տավարի, ոչխարի և թռչնեղենի մսից պատրաստում էին զանազան ճաշատեսակներ: Առաջին օրերին պատրաստում էին մեծ քանակությամբ գաթա ու հավա: Երեկոյան ուտում էին կաթնապուր, մածուն, խաշած ձու: Բարեկենդանի կերակուր են համարվել՝

Փաթիլան  
սրռոն  
Բխբխիկը  
Փաթիլա

Լավաշի հաստությամբ խմորի վրա քսել են պանիր կամ դավուրմա, բարակ հացով ծածկել են, տապակել, ապա իրար վրա դարսելով կտրատել են, վրան լցրել հալած յուղ:

### *Մրռոն*

Բարակ բացված հացը կտրտել են, լցրել սխտորած մաճնաթանի մեջ, հետո հանել են, վրան յուղ լցրել ու կերել:

Բխբխիկ

Բխբխիկը այլուրով, ձվի դեղնուցով ու կաթով եփել են յուղի մեջ: Մատուցելուց առաջ վրան լցրել են մեղր:

Աղբյուրը՝ Հրանուշ Խառատյան, «Հայ ժողովրդական տոներ»

Արտակ Արքեպիսկոպոս Մանուկյան, «Հայ եկեղեցու տոները»

<http://www.araratian-tem.am/holdetails.php?id=1753>

### *ԴԻՄԱԿԱՀԱՆՂԵՍԻ «ԱՐՄԱՏՆԵՐԸ»*

Դիմակահանդես երեւոյթը ծնունդ է առել Վենետիկում. դեռեւս 1094թ. քաղաքապետ Դոժ Վիտալե Ֆալիերոն պաշտոնական փաստաթղթերում ներմուծեց «դիմակահանդես» բառը: Ումանց կարծիքով՝ վերջինիս ստուգաբանությունը գալիս է իտալերեն «carnis laxatio» կամ «carnasciale»՝ «հրաժարվում եմ մսից» արտահայտությունից, ինչը պայմանավորված էր Մեծ Չատիկից առաջ միս չուտելու սովորությամբ: Այսօր դիմակահանդեսը գերծ է ամեն տեսակ կրոնական ավանդույթներից եւ լոկ ուրախ ու շքեղ տոնախմբության է վերածվել: Բսկ ահա մարդկանց մեկ այլ խումբ էլ կարծում է, որ «կառնավալ» տերմինի նախահայրն է լատիներեն «carrus navalis»-ը, որը կարելի է հասկանալ որպես զվարճանքի անիվ, տոնական խրախճանքների, փողոցային տոնական երթերի եւ թատերական խաղերի ամբողջություն: Թե որքանով են այս վարկածները համապատասխանում իրականությանը, չգիտենք, սակայն 1296թ. Վենետիկի հանրապետության Սենատը Մեծ Պահքին նախորդող օրը հռչակեց որպես տոնական: Այդ օրվանից սկսած՝ սկիզբ առավ դիմակահանդեսային տոնախմբությունների «հասարակական հաշվարկը»:

XV դարի կեսերից մինչեւ XVI դարի վերջը դիմակահանդեսների կազմակերպմամբ զբաղվում էր Compagni di Calze - երիտասարդ բարձրաշխարհիկների միաբանությունը, որի անդամները միմյանցից տարբերվում էին իրենց գուլպաների գույներով: Հանրապետության անկումից հետո՝ XIX դարում, Վենետիկը դադարեցրեց

դիմակահանդեսների կազմակերպումը: Այդ հիրավի գունեղ ավանդույթը վերականգնվեց միայն 1979թ.: Վենետիկյան դիմակահանդեսը կազմակերպվում է Ջատիկից քառասուն օր առաջ՝ «մարդի գրա» օրը (ֆրանսերեն *mardi gras*- մեղա գալու օր), սակայն մասսայական հանդիսությունները սկսվում են դրանից երկու շաբաթ առաջ՝ այն բանից հետո, երբ քաղաքի Սան Մարկո կոչվող կենտրոնական հրապարակի վրայով թեւածում է աղավնին: Վաղնջական ժամանակներից դիմակահանդեսի բացման օրը զանգակատունը եւ հարակից հրապարակը միացնող ճոպանի վրայով կալանավոր էր անցնում եւ հրապարակի վրա վարդի թերթիկներ էր թափում: Եվ եթե դժբախտը կես ճանապարհին ցած էր ընկնում, ապա համարվում էր, որ գալիք տարին վատն է լինելու, իսկ եթե, պատահաբար, ճոպանով հասնում էր վերջնակետին, նշանակում էր՝ տարին խոստումնալից պետք է լինի: Ժամանակի հետ կալանավորին փոխարինելու եկան ակրոբատները, այնուհետեւ՝ արհեստական փայտե աղավնիները, որոնք, ճոպանի կեսին հասնելով, բացվում էին և վարդի թերթիկներ շաղում հրապարակի վրա: 2001թ. վենետիկցիները ցանկություն հայտնեցին վերականգնելու այդ հիրավի գեղեցիկ ավանդույթը, և արհեստական աղավնու փոխարեն կրկին ճոպան բարձրացավ հրեշտակի զգեստ հագած ակրոբատը:

Ընդհանրապես, դիմակահանդեսները թատրոններում, մեծ հյուրանոցներում, սրճարաններում եւ փոքրիկ խաղատներում իրականացվող ներկայացումներ են, ուր համընդհանուր տոնական մթնոլորտ է տիրում, որտեղ հասարակ մարդիկ միաձուլվում են բարձրաշխարհիկ հասարակությանը, եւ դիմակների ներքո դժվար է հասկանալ, թե ով՝ ով է: Ամենուր պարողներ եւ աճպարարներ են, թխվածքներ ու խորոված խնձոր վաճառողներ, կատակերգու դերասաններ եւ օձ վարժեցնողներ: Քաղաքի հրապարակներում կազմակերպվում են պատմական նշանակության համերգներ եւ հրավառություններ: Դիմակահանդեսի ժամանակ գինին եւ երաժշտությունը գետի պես «հոսում» են, թատրոններում խաղում են դիմակահանդեսային ներկայացումներ, հին դրյակներում ընտրյալ հասարակության համար դիմակահանդեսային պարահանդեսներ են կազմակերպվում: Ըստ *practik.am*-ի՝ Վենետիկյան դիմակահանդեսի ամենատեսարժան իրադարձությունը Մեծ ջրանցքով անցնող զարդարված գոնդոլների «շքերթն» է: